

մի ընդհանուր, միասնական, անշուշտ և անհոգի ծածկողի տակ—չոր։

Այդ ծածկոցը կործանում է աշխարհը։ Այդ ծածկոցը դժբախտացնում է միլիոններ։ Ոչինչ։ Մեզ համար ցավ չէ դառն թիշուրը, չէ, չէրէջեց՝ բեռն Սոսանոյն մէջ։ Տօլստոյը հանձարին յատուկ մի համարակալութեամբ շնչուում է այն սարսափելի հանգամանքը, որ հազուադէպ նոյն-իսկ չէ զանազանում անասակ կնոջը ազնիւ, պատուաւոր կնոջից։ Նոյն ազնւամանկները թէ մէկի և թէ միւսի վրա, նոյն մօզան, նոյն բաց թեւերն ու կուրծքը։ Եւ սա վերաբերական չէ, ժողովրդի հարստութիւնից միլիոններ են չարտուում մօզայի գեղարվեստական կոկորդը, որ պէս զի կանացի սեռը մի պատանի մէջ թաղ-վի, որպէս զի միայն մի ընդհանուր տեղը ունենայ մարդկութեան կէսը, զգայնութիւն գրե-գրող տեղը։ Դժբախտ մարդկայնութիւն։ Նա կորած է, նա հրէշ Բաշաղի բերանն է գցված...

Այժմ, ընթերցող, հարցրէ՛ք ինձ—ինչո՞ւ այս բոլորը։ Ես պատմում եմ բարեգործական պա-րահանդէսների առիթով։ Ինչո՞ւ այդ պարա-հանդէսները յիշեցնում են ինձ Ազատի և Եւ-րոպայի պատմութիւնը։

Դուք, անշուշտ, տեսել էք պարահանդէսներ, գիտէք, որ դրանք կանանց համար են, գիտէք, նախնիքս թէ ինչ պատրաստութիւններ է տեսնում իւրաքանչիւր կին՝ պարահանդէսում փայլելու համար։ Եւ երբ գիտէք այդ բոլորը, դուք ուրեմն, հասկացել էք և իմ միտքը։

Կամենում էք մի գուռուր հաւաքել աղքատ-ների համար։ Փորձեցէ՛ք կազմել մի ստորա-գրութեան թուղթ, դիմել արկիւններին և օ-րիորդներին։ Ուզում էք՝ իւրաքանչիւրի մօտ մի ամբողջ ճառ արտասանեցէ՛ք այն գետնա-քարը, կապտած տկոյրութեան մասին, որ ձեռնովայ այս ցորենին ունում է իր սարսա-փելի որջերի մէջ։ Այդ ճառը ազդեցութիւն չի անի։ Ինչո՞ւ։—Որովհետեւ մեռած է հոգին, այն-տեղին չէ հասնում այն ամենը, ինչ մարդկայ-նութեան է վերաբերվում։

Բայց ահա դուք շարժեցէ՛ք այն, ինչ նրա ամբողջ կեանքն է, նրա գոյութեան միակ նպատակն է կազմում։ Դուք սարքեցէ՛ք պա-րահանդէս։ Առատ լոյսերով լիքը դահլիճի մէջ, խուռն բազմութեան աչքերի առաջ, կարելի է ցոյց տալ զգեստ, կարելի է հասկացնել, թէ ինչպէս մարդը պարտւում է մի ընդհանուր ծածկողի մէջ, կարելի է փայլել մետաքսի կտորներով, ոսկով, անշուշտ հեղինակով։ Այդ ար-դէն ուրիշ բան է։ Տիկինը կամ օրիորդը հա-րիւրներ կը ծախսէ իր փայլի համար, կերթայ ձեռն նշանակած տեղը, որպէսզի մի կամ եր-կու բուրբի տայ թշուառների համար։ Ուրիշ կերպ նա այդ երկու բուրբին չի հանի իր զարդանիցի։ Եւ եթէ դուք չիմացաք այնպէս սարքել ձեռն պարահանդէսը, որ իւրաքանչիւր կին որքան կարելի է շատ փող ծախսէ այն-տեղ փայլելու համար՝ կարող էք ապահով մնալ, որ երկու բուրբի տալու յօթարութիւն ունեցողներ շատ և շատ քիչ կը գտնէք։

Այս պատճառով էլ պարահանդէսները տա-րեցտարի աւելի և աւելի ճոխ ու մեծամասն են դառնում։ Պէտք է ոչինչ չը խնայել։ Եւ յա-տարարեցէ՛ք այնպիսի բաներ, որոնք շատ թանկ պիտի նստեն պարողներին, գտէ՛ք մի գիւղերվայ ընթացքում մի բուռը փող դէն չը-պարտելու լաւագոյն միջոց, և կը գտնէք բարե-գործները։ Սխալ, օրինակ, յայտարարվում է զիցուր, թէ պարող կանայք եւագոնական սանրուածք պիտի ունենան։ Մի այդպիսի սանրուածք կը նստէ 20—25 բուրբի։ Ոչինչ, ամենայն հետեւութեամբ կը տան այդ գուռուրը, կը տան մի երեք կամ չորս ժամի համար։ Միւս օրը, ի հարկէ, կրած է 25 բուրբին, սանրուածքից հետք էլ չէ մնացել։

—Ափսոս չէր այն փողը, ասում էք դուք։
—Ի՞նչ էք ասում, դարմացած և վիրաւոր-ված պատասխանում է տիկինը։—Շատ օրիգի-նալ բան էր...

—Բայց այդ 25 բուրբով քանի խեղճեր կապ-րէին։

—Ես իմ անձնական հաճոյքի համար գնացի պարահանդէս։

Ողբալի իրողութիւն։ Նա ճիշտ է, հազար անգամ ճիշտ է։ Տիկինը գնացել է իրան ցոյց տալու, գնացել է ասելու ամենքին, թէ մենք, քրդոյ՜ սեռ անուանվածներս, ահա այսպէս ենք փողը դէն չարտուում իսկ դուք, միամիտ մարդ, ինչո՞ր թշուառների մասին էք մտածում։ Ո՛րք և երբ է ասված, թէ մարդկութեան հոգսերը պիտի տանջեն կնոջը։ Դրա համար հարկաւոր էր, որ կնոջ գոյութեան մէջ ամենից շատ, ամենից բարձրագոյն կանգնած լինի մարդը և ոչ թէ պաճուճանքը, հարկաւոր է, որ գոյու-թեան նպատակ ընտրվի անմահ, ստեղծագոր-

ծող հոգին, և ոչ թէ չորի կտորը։

Ահա մօտ օրերումս աղքատների համար տեղի կունենայ՝ զեկադէստական պարահան-դէս։ Ո՛րպիսի օրիգինալ միտք։ Եւ ես հաւա-տացած եմ, որ Թիֆլիսի շատ տներում այժմ կատարեալ իրարանցում է սկսված։ Կատարաստ-վում են, դէս ու դէն են վազում, քանդվում են՝ զեկադէստական ճաշակով հագնվելու և մի երեք-չորս ժամ իրանց մարմինը այդ ճաշակով ցոյց տալու համար։ Կը պատրաստվեն, հազարների ծախսեր կանեն, որպէս զի միւս օր այդ բոլոր ճոթ ու փա-րանքները մի անկիւն չարտվին։ Իսկ լրագիրնե-րում հաշիւ կը տրվի, որ զեկադէստական պա-րահանդէսից դուռ արդիւնք միայն հազար ու այսքան բուրբի—եկող տարի մենք մի ուրիշ բան կը հնարենք, միւս տարին մի այլ բան, և այսպէս կը շարունակենք մինչև այն աստի-ճան, որ այլ ևս կը սպառվենք, չենք գտնի գրաւելու, հրապուրելու միջոց։

Ի՞նչ կասեն այս բոլորի առիթով մեր եր-դուեալ ֆէմինիստներն ու ֆէմինիստուհիները։ Արդեա՛ք իրաւունք չեն տայ ինձ անուանել առարկան իր սեփական անունով, այսինքն այն, որ կինը մեզանում նիւթական և բարոյա-կան աւելումներ տարածող մի ոյժ է։

Մեզանում, մասնաւոր մեզանում։ Մեզ պէս մի կապիկ, ինքնուրոյնութիւնից զուրկ ազգի մէջ, հաւատարմեցած եմ, կինը աւելի մեծ աւե-րանքներ է գործում, քան նոյն-իսկ մօզաների հայրենիք Պարիզում։

Բայց մինչև երբ։

Արդէն մեզանում սկսել են կուռել մոլու-թիւնների դէմ։ Կազմվում են ընկերութիւն-ներ արկիւնի դէմ, կազմվում են չըմաններ, որոնք խօսք են տալիս ծխախոտ չը գործածել։ Իսկ երբ պիտի այդպիսի կազմակերպութիւն-ներ առաջ գան կանացի այն հազար մոլու-թեան դէմ, որի անունն է անմիտ, վիրաւո-րական, ստորացուցիչ շտապութիւն։ Ե՛րբ պէտք է հոգեկանը յաղթող հանդիսանայ ար-տաքինի վրա։ Ե՛րբ պէտք է մոռացվի փալա-սիների պաշտամունքը։ Կը գայ մի օր, երբ հա-սարակ, պարզ ու վայելուչ հաղուսքը ստորու-թիւն, յանցանք, ծաղր չի համարվի։

Ես չը գիտեմ։ Մարգարէանալ դժուար է, քանի որ մեր կանանց հասարակութեան մէջ ոչ մի լուսաւոր երևոյթ չենք նկատում, քանի որ անաստի պէս ամայի ու անպտուղ է հայ կնոջ մտաւոր աշխարհը, և կապիկները, արտաքինը ընդօրինակելու մեծ հետեւութիւնը, միակ ցաւալի նշաններն են այդ անաստի մէջ։

Ես ամբողջ արտից աշողութիւն եմ ցանկա-նում ֆէմինիստական շարժման։ Ես ցանկա-նում եմ, որ աշխարհի մէջ վերանայ առհասա-րակ ամեն մի ստրկութիւն, որ մարդ ասած բանը ոչ մի տեղ չը լինէր իրաւագործի, տանջ-վող, հարստահարվող։ Բայց վարդապետութիւն-ները մեռած դաս են միում, երբ չեն կապ-վում կենդանի գործի հետ։ Ես կը կամենայի, որ հայ կինը գտնէ թոյլ, համեստ նշոյլներ ցոյց տալ, թէ ինքն էլ, այն, պատասխանում է մարդ լինելը, այս բանի բարձր, նուիրական մտքով։ Եւ դրա համար նա միջոցներ շատ ունի։

Թող ցոյց տայ, թէ պաճուճանք չէ իր իդէա-լը։ Թող նա ինքը ձայն բարձրացնէ իր սեփա-կան ձեռքով գործած աւելակների դէմ։ Շատ է բարձրացրել, պաշտվել շտապութիւնը։ Թող այժմ մի քիչ էլ հանդէս գալ պարզասիրու-թիւնը։ Մինչև այժմ յարգանքի, երկրպագու-թեան առարկայ են տանակ հազարներ ար-ժեցող աղամանները։ Թող այժմ էլ հիացմունք պատճառէ համեստ, էփանազիւ, բայց վայելուչ, ճաշակով կարված չիթէ հազուադէպ։ Մեր օրիորդ-ները կըմկում են, արտասահման են գնում։ Բարձրագոյն ուսում ստանալու համար։ Բայց ինչ են նրանք մտցնում մեր կեանքի մէջ։ Ո՛րք է նրանց գաղափարական պրօպագանդան, ո՛րք են նրանց կազմած ընկերակցութիւնները, ու-րոնց նպատակը լինէր կուռել շտապութեան դէմ, այն սոսկալի մոլութեան դէմ, որ քա-տում է մեր բոլոր ոյժերը և տանում է թշուա-ռութեան անդունդ։

Ժամանակ է, որ հայ կինն էլ զգայ, թէ զգալիս է, սև ապագայի տէր է այն հասա-րակութիւնը, ուր կինը միմիայն անհոգի պա-ճուճանք է։

Հարկաւոր է այդ բանը օր առաջ հասկա-նալ։ Ո՛րքան մարդկային վեհ գործեր են սպա-սում հայ կնոջը... Սպասում են նրանք այն օրին, երբ հայ կինը ամօթ կը համարէ աղա-մանդէ ջորոցներով կապկապած մետաքսի կը-տորների մի կոյտ լինելը։

Ե՛րբ կը գայ այդ օրը...

Մ. Ա. Տ. Ն. Ա. Գ. Ռ. Թ. Ի. Ի. Ն.

Այս զեկադէսի ամսում մատենագրական ասպարէզի վրա կենդանութիւն է նկատվում։ Մէկ մէկի ետեւից Թիֆլիսում հրատարակվե-ցին մի քանի ինքնուրոյն և թարգմանական գրուածներ և բնօրինակներ։ Յիշենք պ. Ա. Ահարոնեանի «Խեղճ երգ» ընդհանուր վերնա-գրով հինգ պատմութեան, որոնք տպվեցան «Մուրճ» ամսագրում և այժմ մի հատորի մէջ ամփոփված, առանձին գրքով լոյս են տեսել։ Շահրիարի «Ջուղ-Բուլան» վէպը Պարսկաս-տանի կենսաբան, որ նոյնպէս առանձին գրքով լոյս տեսաւ, և լոյրջ Լիտուանի «Պատկեր» վերջին օրը» մեծ վէպը, որ թարգմանել է անգլիական ընդգրից պ. Յ. Միրզոյեան։

Այսօր մենք կանգ կառնենք երկու հրա-տարակութեան վրա, որ նոր ստացանք ար-տասահմանից և արժանի են գրաւելու հասա-րակութեան ուշադրութիւնը։ Դրանցից առա-ջինն է «Հայ Հանդէս» ամսուով կիսամասի գրական և ազգային թերթը, որ սկսել է լոյս տեսնել Վիեննայի միջոցով։ Երկրորդը Նահապետեանի հրատարակութեամբ Մեր ձեռքը հասնել են «Հայ Հանդէս» միայն մի երկու համարները, որոնք սակայն ցոյց են տալիս, թէ նոր թերթը, հա-կաւակ արտասահմանում հրատարակվող բազ-մաթիւ հայ հանդէսներին և լրագիրներին, լրջու-թեամբ և գիտակցութեամբ պէտք է վերա-բերվի տպագրական խօսքին և պէտք է լրացնէ արտասահմանեան հայ մամուլը։

Միջոցով իրիկիայի կաթոլիկոսական ընտ-րութեան մասին, «Հայ Հանդէսը» այն կարծիքն է յայտնում, որ այդ ընտրութեան ժամանակ հայոց եկեղեցու նախնական ընտրական իրա-ւունքները չեն պահպանվել, ինչպէս նրանք պահպանվեցին Միտիայի կաթոլիկոսի և Ալեքսի-ճեանի ընտրութեան ժամանակ։

Բուն գրական մասի մէջ տպված մի յօդուա-ծից, Բոստօն հրատարակված «Վազգէն երգա-րանի» մասին, մենք իմանում ենք մի քանի նորութիւններ, որոնք, մեր կարծիքով, առաջին անգամ են հրապարակ հանդուս։ Դուռն է դալիս, որ մեր ազգային երգերից շատերը ամ-բողջապէս հայ մտքի ծնունդ չեն, այլ իւրա-ցում են հետեւողութիւն, կամ պարզապէս թարգ-մանութիւն։ Այսպէս, օրինակ, Պէշիկիշա՛յի մի համալուար Բաշարի թարգմանից, երբ, այն է «Ոչ փող զարկինք, ոչ արձագանք լեռնադաշտ», կամ նրա «Մասցես բարեաւ, սէր իմ սէր, հրաւեր մարտին որոտաց», կամ «Մինչդեռ յու-ռով խաղաղ ընտրութիւն» երգերը թարգմանու-թիւններ են իրաւորացի Մուր բանաստեղծի կամ Հիւրէյի գրութեան։ Եւ զարմանալի է, որ այդ երգերը մի քանի ժամանակ առաջ Ամե-րիկայում տպվել են անգլիական թարգմանու-թեամբ, ուստի և շատ ճիշտ է նկատում հան-դէսը, տեսելով, թէ անհրաժեշտ է մեծապէս զգոյշ լինել, որպէսզի օտարներից առանձինը իբրև մեր նրանց չը վերադարձնենք։ Հանդէսը ցանկութիւն է յայտնում, որ Նալբանդեանի «Ազատ Աստուած» երգի մասին ևս ստուգվի, թէ ճիշտ է արդեօք, նա թարգմանութիւն է գերմաներէնից, ինչպէս ենթադրվում է։

Թերթը հաղորդում է և մի հետաքրքրական լուր։ Օրմանեան պատրիարքը մի քանի ժամա-նակ առաջ մի ընդարձակ աշխարհագրաբա-ղքի յօդանաման գաղափարը յղացաւ և մի յանձ-նախուժ ևս կազմվեց։ Բայց այս օրերս ստաց-վեց հրաման Բ. Դանից գաղափարները այդ հրա-տարակութիւնը։

«Հայ Հանդէսը», ինչպէս ասացինք, հրատա-րակվում է երկու չաբաթը մի անգամ, երկու թերթից բաղկացած և գինն է տարեկան 4 բուրբի։ Ուսումնասանի համար։

Երկրորդ ուշադրաւ հրատարակութիւնը՝ գեր-մանական լայնատաքի պատգամաւոր Էդուարդ Բէրնշտայնի այս տարվայ յունիսի 26-ին Բեր-լինում կարդացած դասախօսութիւնն է, որ այժմ առանձին տպագրութեամբ լոյս է տեսել։ Հեղինակը նպատակ է դրել իրան՝ այդ դասա-խօսութեամբ ծանօթացնել գերմանական հա-տարակութիւնը Փոքր-Ասիայի վիճակի և նրա քրիստոնեայ ազգաբնակչութեան կրած դառն աղէտների ու ընթացիկ անհրաժեշտութեան հարցի հետ, միևնոյն ժամանակ ցոյց տալ, թէ ինչ պարտաւորութիւններ ունի կատարելու Եւրոպային։

Խօսելով մասնագիտական մասին՝ հեղի-նակը ասում է, թէ Եւրոպայում կան մարդիկ, որոնք մեծ գաղափար ունեն իսլամ կրօնի մա-սին և ուսման կարծում են, թէ նա պարունա-կում է նոյն-իսկ այնպիսի սկզբունքներ, որոնք

աւելի վեհ են քրիստոնեական սկզբունքնե-րից։ Հեղինակը հերքում է այդ տեսակէտը, ապացուցանելով, որ արաբների ունեցած քա-ղաքակրթական այն շրջանը, որն առիթ է տուել այդպիսի սխալ կարծիքի՝ եղել է շատ կարճատև աշխարհի պատմութեան մէջ և փոխ-է անվան զոտոմանների եգիպտական քաղա-քակրթութիւնից։

Հեղինակը յօշուփում է և մի այլ կարևոր խնդիր—Գերմանիայի կատարած միջազգային դերի մասին։ Նա յայտնում է, որ Ֆրանսիան, Անգլիան, Ռուսաստանը ազատել են ժողո-վուրդներ, ազատարարի դեր են կատարել մարդկութեան պատմութեան մէջ, և ամբողջ ժողովուրդներ կան, որոնք կարող են ասել Ռուսաստանին, «մենք ձեզ հեք պարտական մեր ազատութեանը»։ Բայց Գերմանիայի համար կարելի է կրկնել Կարլ Մարքսի խօսքերը, «Մենք, գերմանացիներս, ընկերացել ենք, ու-ղեկցել ենք ազատութեան միայն այն օրը, երբ պէտք էր նրան թաղել»։ «Մենք երբեք—ասում է հեղինակը—ազատութիւն չենք բերել ոչ մի ազգի»։

Այս ինքնաշնորհապատմութիւնը, անշուշտ, պա-տիւ է բերում յարգելի պատգամաւորին։ Դրժ-բախտաբար, շատ քիչ է այդպիսի ինքնաշնո-հապատմութիւն յայտնան Գերմանիայում։

Հ. Ա.

Նոր ստացված գրքեր։

- 1) «Նահապետ Գուշակի Դիւանը» միտոյ եր-գեր, խրատական և այլաբանական երգեր, զըն-նական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Արշակ Զօպանեան, Պարիզ, 1902 թ. գինն է 3 ֆրանկ։ 2) «Խեղճ երգ», Ա. Ահարոնեանի, Թիֆլիս, 1902 թ. գինն է 1 բուրբի։ 3) «Ջուղ-Բուլան», վէպ Պարսկաստանի կենսաբան, Շահ-րիարի, Թիֆլիս, 1902 թ. գինն է 1 բուրբի։ 4) «Սոխակ Հայաստանի», ազգային իրականու-րագրան, հրատարակեց Գրիգոր աւագ քահա-նայ Գրիգորեան, հատոր I, հինգերորդ տպա-գրութիւն, Բագու, 1902. 5) «Պատկեր» վերջին օրերը», պատմական մեծ վէպ լոյրջ Լիտուանի, թարգմանութիւն Յ. Միրզոյեանի, մի առաջա-բանով Հ. Առաքելեանի, հրատարակութիւն «Գրականութիւն», գրասխանութի, Թիֆլիս 1902, գինն է 1 ր. 50 կ.։ 6) «Պարսկաստանի իրաւորացի պէտք է հասկանալ», երկրորդ հատոր, Բարդուղիմէոս եպիսկոպոս Գրիգորեանի, Թիֆ-լիս, 1902 թ. գինն է 1 բուրբի։ 7) «Պետրոս Սիւնեացի եպիսկոպոս», Գալուստ Տէր-Մկրտչ-եանի, Վաղարշապատ, 1902. 8) «Մանգիստա-նի մասնատման», նոյնի, Վաղարշապատ, 1902. 9) «Գրիգոր Մանգիսի Ռաֆիկ», նոյնի, Վաղար-շապատ, 1902. 10) «Վազար Փարսեցու ձեռա-գրեր», նոյնի, Վաղարշապատ, 1902. 11) «Какъ окупить идею построения для туберку-лезныхъ больныхъ на Кавказѣ, доктора А. Хатисова, Тифлисъ, 1902. 12) Суффиксы русскаго языка, Л. Лопатинскаго. 13) «Շի-րաբ», պատի հատուածների օրացոյց 1903 թ. կազմեց Կ. Արիսեան, Թիֆլիս, 1902, գինն է 50 կոպէկ. 14) «Շիրակ», օրացոյց 1903 թ. ընդարձակ յաւելումով, կազմեց Կ. Արիսեան, Թիֆլիս, 1902, գինն է 20 կ. 15) «Ախուրեան», հայ կանանց օրացոյց—հանդէս 1903 թ., խըն-բարից տիկին Նուարդ Արիսեան, Մէքսանդրա-բադ, 1902 թ. գինն է (?) 16) «Ed. Bern-stein», Les souffrances du peuple arménien et le devoir l'Europe, Genève, 1902, գինը 40 անտիւր. 17) Гл. Успенский и Н. В. Гоголь, крѣт. этюдъ В. Вартаньянца, Тифлисъ, 1902, գինն է 20 կ. 18) «Ամայի դաշտում», Մարգարի Գորիկի, թարգմ. Մարգարի Խաչա-կեան, Ալեքսանդրաբադ 1902, գինն է 5 կոպէկ. 19) «Հայ-ժողովրդական հեքիաթներ», Տ. Նա-ւասարեան, ինքնորոգ գիրք, Թիֆլիս, 1902, գինն է 50 կ. 20) «Ազգագրական Հանդէս», եօթներորդ տարի, IX գիրք, Թիֆլիս 1902։

ՆԵՐՏԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ մի յատուկ յանձնա-ժողով Ներկայումս ընտնւմ է թմարառականների վերաբերելով այն կանոնները, որոնք անցնալ տարի հրատարակված էին ամառանոց գնացող անասնապահների շարժումները կանոնաւորելու նպատակով։ Յանձնաժողովը, որ ընտրված է Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան կողմից, մտադիր է մշակել նոր կանոններ և առաջարկել պատշաճաւոր չըմանների բարե-հայեցողութեան։

Պաշտօնական տեղեկութիւններից երևում է, որ 1900 թ. ընթացքում Անդրկովկասեան երկա-թուղիների ամբողջ եկամուտը հաւասար է եղել 26,621,302 բուրբի,—իւրաքանչիւր վերստից 20,092 բուրբի,—իսկ ծախսերը հաւասար են եղել — 13,832,109 բուրբի։— Իւրաքանչիւր վերստի համար՝ 10,439 բուրբի։ Զուտ ար-դիւնք ճանապարհորդական երթեւեկութիւնից ստացված է 1,202,586 բուրբի, իսկ ապրանք-ների տեղափոխութիւնից—11,586,607 բուրբի։ Անդրկովկասեան երկաթուղիները իրանց չա-

